

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է 2009թ. հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2010թ. մայիս ամսվա նախադեպը:

Հաշտարարի գրասենյակը մայիս ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 68 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 68 բողոքներից 33-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 35 բողոքներից 7-ը մայիսին ստացվել են գրավոր տեսքով և ընդունվել են քննության:

2010թ.-ի մայիսին ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	68
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	35
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	12
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որը օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	7
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը	9
1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, ուղղված են՝	7
1.4.1 Բանկերի դեմ	3
1.5.4 ապահովագրական ընկերությունների դեմ	2
1.4.1 գրավատների դեմ	2

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am Web: www.fsm.am